

ՄԵՆՔ ՍՓԻՒՌՔԱՀԱՅԵՐԷՆ ԿԸ ԽՕՍԻՆՔ

Posted on April 18, 2020 by Keghart



Category: [Opinions](#)



Հայոց լեզուի աղաւաղումները սորուքիւն չեն, անոնք ուղեկցած են մեր ժողովուրդի կեանքին՝ ըլլա՛յ Հայրենիքին թէ սփիւռքի մէջ: Սակայն աններելի է, որ ազգային պետութեան պայմաններուն մէջ իսկ մեր ազգային ու պետական ՄԻԱԿ լեզուն կը յօշոտուի, այն ալ, յաճախ, պետական գործիչներու կողմէ, որոնք "Լեզուի Օրէնք"ին իսկ պահանջով, պարտաւոր են անաղարտ հայերէն գործածել: Մեր կայքին մէջ վերահրատարակելով Վիեննայի մեր պատուական հայրենակիցներէն Սեպուհ Պաղտոյեանի՝ 34 տարի առաջ հեղինակած գրութիւնը, յոյս ունինք, որ նայելով հայելիի մէջ ու հոն տեսնելով մեր լեզուական տգեղ դէմքը, կը ձգտինք անելի նախանձախնդրութեամբ վերաբերիլ մեր ազգային հարստութիւններէն եղող եւ մեր ինքնութեան հիմքը կազմող հայոց լեզուին: Խմբ.

Սեպուհ Պաղտոյեան (Վիեննա), «Չարթօնք» օրաթերթ, Պէյրութ, 16 Օգոստոս 1986

Այս յօդուածովս ո՛չ կը փափաքիմ քննադատել սփիւռքահայերէն խօսողներս, ո՛չ կը փափաքիմ դրդապատճառները վերլուծել ու ո՛չ ալ խիզախութիւնն ունիմ ելք մը կամ դարման մը առաջարկելու: Ասոնք նիւթեր են, որոնց մասին կարելի է յիշել, սակայն ամենէն փորձառու եւ գիտուն ընկերաբանն ու լեզուագետը, պատմաբանն ու գրագետը չեն յանդգնիր ու չեն կրնար իսկական ու գործնական ձեւով հարցերը քննարկել եւ լուծումներ առաջարկել:

Յաջորդող տողերուն մէջ ես պարզապէս կը ցանկամ վերջերս տեղի ունեցած համահայկական ժողովի մը ընթացքին գործածուած հայերէնին (սփիւռքահայերէ՞ն) տեսարանը ներկայացնել: Պետք է հոս նշել նաեւ, թէ Հայրենիքին մէջ գործածուած արեւելահայերէնն ալ նուազ դժբախտ չէ դարձած իր շուրջը տիրող ռուսերէնի ազդեցութիւններէն:

– Սիրելի՛ հայրենակիցներ, կրնամ ձեզի այս մէկը վստահեցնել *քի* մեր ժողովները *հիչ* այս տեսակի *փերուշան* առաջարկներ չունենին *պէ*: Ո՞ր կ'երթանք *կոր*: Ալ *շունչուս* հատաւ ըսելէն:

– Ալոր, դուն *իղաւունք* ունիս, *ող* մենք *այեղս* բնաւը այս տեսակի *աղցեղուն* մէջը *իղաղու* հանդէպ *նեղողամիտ* չենք: *Տոն*, ատիկա չի *նշանակեղ* ող չենք *կղնալ* ամաճայնիլ, *նէս* փա՞:

– Ազիզ ջան, քո ասածն էլ, առաջարկն էլ մենք *արսեփթետըն* ենք անում: Բայց *փրաքթիչ* քայլեր պէտք է առնենք: Հայկական *վերսամլունկները* անելի լաւ պէտք է որ *օրկանիզիերէն* անենք: *Կոթ զեր տանք*, որ առնուազը հաւաքուել ենք ու այս հարցերը *տիսքութիերէն* ենք անում: Այսինքը, դժուարութեան առաջին քայլը լուծուած *ա*:

– Եսանի այս հարցը *մաալէշի* կապելով չե՞նք կրնար միւս նիւթերուն անցնիլ: *Ղաֆա* ցաւցուցիք *պէ*: Ալլախնիդ սիրեմ, խօսելու մէջ *եալաթիֆ* էք, *ամմա* գործելու մէջ՝ *զըֆըթ*: *Եա ամմի*, ի՞նչ հիւանդութիւն է սա, *եահօ*:

– Օ քէյ, օ քէյ, շատ էքզենտրէյթ մի՛ ընէք: Մայ Կատ, գլուխնիդ առիք ու գացիք: Քիչ մը քոնսենթրէյթ ընենք աւելի սիրիքս եւ կարեւոր փրապլըմներու վրայ: Նեվըր մայնտ, որ այս ալ պետք է տիսքասս ըլլայ, սակայն միւսերը աւելի կարեւոր ու ֆանտրմենթըլ են:

– Բոլորդ էլ փորձառու դոցենտների նման ես հարցը կրիտիկական ձեւով անալիզ էք անում: Մեր կոմիտէի պլենումներում էլ նման հարցերի մասին միևնույն կերպով խօսում են, բայց ոչ մի կոնկրետ արդիւնքի չեն հասնում: Մեր դիսկուսիաները չենք անում սոցիալական եւ դեմոկրատական հասկացողությամբ:

Որքան ժողովը կ'երկարի, այդքան պարզ եւ ընդունելի կը թուի ըլլալ, բոլոր՝ մասնակցողներուն, գործածուած սփիւռքահայերէնը: Նախ կ'ըլլան որոշ ծիծաղներ կամ կէս-զարմանքի ու կէս ապշութեան կեցուածքներ, սակայն, շատ չանցած, գրեթէ ոչ մէկը կը մտածէ գործածուած սփիւռքահայերէնին մասին, ու ժողովը կը շարունակուի լուծելու համար ա՛լ աւելի կարեւոր հարցեր:

Ալոր, այ հոփ կրցի իմ իտէներս եւ մաշքալներս ձեզի կոնկրետ էքզամփլներով ներկայացնել:

There are no comments yet.